*ոխվ ի դուռն յաղթամարայ[1] ս.՟բ խաչին, որ է առանց դաւի և առանց ուշուրի, անջինջ յիշատակ իւր և իւր ծնողաց. և զաէր մկրտիչն ըստ[2] կարգին մելքսեթի դասակից ար*

**36ա**[3] *արասցէ և յերկնից արքայութ՟ արժանի առնէ ամէն։ Եւ յիշեցէք և ա՟ծ ողորմի ասացէք գաւաշուց նաւրուզին, որ մականուանբ[4] փօռօյ կոչի, և ամիրին և զիրաքին և իւրանց ծնողացն. և կամակից և ձեռնատու եղան տ՟ր մկրտչին որ զգ՟ արտն գնեցին՝ անջինջ յիշատակ իւրեանց հոգւոյն։ Եթէ ոք հակառակեցէ պատիժն կայենի առցէ և անէծք ուդայի և[5] խաչ հանողացն ընկալցին ամէն. Թվին ռ՟ճ՟ղ՟ե՟, ի հայրապետութ՟ ս՟բազան նիկողայոսի կ՟թկոսին ի յինն ամի. ա՟ծ լուսաւորէ իւր հոգին ամէն։*

*Յիշեցէք[6] և ողորմի ասացէք շատխու Թաղի քօսենց մ՟հտսի ասլանին և եղբարցն սարգսին և աւխտխսին։ որ[7] զօրհնե՛լ հոգի տ՟ր յովանէսին.*

*և զ՟բ*

**36բ** *և զ՟բ տունն և կամեցան և արարին ոխվ ի վ՟ր ս՟բ խաչին յաղթամարայ[8] ի հայրապետութ՟[9] տ՟ն նիկողայոս կ՟թկոսին և յամէն տարի ա՟ զռ՟շ տայ ս՟բ աթոռին ով որ նստի այն տուն. այսինքն՝*

---

[1] Զ. յաղթամա

[2] Զ. *կրճատուած ձեւով* (ր՟ս)

[3] Զ. *այստեղից սկսած չկայ այլեւս ոչ մի իջաթիւ. ուստի և նշանակում ենք այն թերթահամարներով, որ ինքներս դրինք Զ.ում։ Զ. սոյն էջի ճակտին կայ* Ե՟։

[4] Զ. Բ-*ի վրայ պատիւ* (՟).

[5] Զ. Եւ-*ից յետոյ* խաճ չ *ջնջ. նշ.*

[6] Զ. *շրն.*

[7] Զ. *ըստ մեզ ուղղելի* Եւ *առանց վերջակէտի.*

[8] Զ. յաղթամայ. *հմ. վերև ծան. 1.*

[9] Զ. ի ճայապետութ՟